ZCMC
ԶԱՆԳԵԶՈՒՐ
ՊԱՀՊԱՆԵԼՈՎ
ԱՐԺԵՔՆԵՐԸ

Տարբերակ 1.0
Հաստատված է տնօրենների խորհրդի կողմից
27.11.2024թ.

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԱՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն» կամ «ՁՊՄԿ») ձգտում է ապահովել իր գործունեության համապատասխանությունը ՀՀ գործող օրենսդրությանը և միջազգային չափանիշներին ու լավագույն փորձին: Այս հանձնառության շրջանակում Ընկերության բոլոր աշխատակիցները (ներառյալ բարձր ղեկավարությունը և Տնօրենների խորհրդի անդամները) պետք է ձգտեն պահպանել կիրառելի իրավական չափանիշները, ինչպես նաև ազնվությունը և անաչառությունը իրենց գործունեության բոլոր բնագավառներում: Այս հանձնառության կարևոր բաղադրիչ է կոռուպցիայի նկատմամբ ՁՊՄԿ-ի զրոյական հանդուրժողականության քաղաքականությունը:

Կոռուպցիան հակասում է Ընկերության ընդունած հիմնական արժեքներին, ինչպիսիք են պրոֆեսիոնալիզմը, արդարությունը, կայունությունը և կիրառելի ամենաբարձր իրավական և էթիկական չափանիշների պահպանումը՝ ինչպես սահմանված է ՁՊՄԿ-ի վարքագծի կանոնագրքում: Ավելին, նույնիսկ կոռուպցիայի մասին ամենաչնչին կասկածը կարող է բացասական հասարակական ընկալում ստեղծել և վնասել Ընկերության հեղինակությանը:

Սույն Քաղաքականության շրջանակում Ընկերությունը՝

- խրախուսում է Ընկերության աշխատողների ու գործընկերների կողմից կոռուպցիոն դրսևորումների, վարքի կամ գործունեության վերաբերյալ ցանկացած մտահոգության բարձրաձայնում:
- շարունակում է ակտիվորեն աջակցել Հայաստանի Հանրապետությունում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱԾԹՆ) իրականացմանը:
- գործընկերների հետ պայմանագրային հարաբերություններ հաստատելիս ապահովում է, որ նրանք տեղեկացված լինեն Ընկերության վարքագծի կանոնագրքի, սույն Քաղաքականության և Հակակոռուպցիոն կանոնակարգի վերաբերյալ ու ընդունեն դրանք պահպանելու պարտականություն:
- սույն Քաղաքականության, դրա շրջանակներում հաստատված Հակակոռուպցիոն կանոնակարգի և դրանցից բխող իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ուսուցում է անցկացնում բոլոր աշխատակիցների համար:
- ընդունում է Հակակոռուպցիան կանոնակարգ, որում կսահմանվեն կոռուպցիայի արգելքը, դրանից բխող պարտականությունները, նվերների ու հյուրասիրությունների սահմանափակումները, և այդ մասին տեղեկացնում է Ընկերության բոլոր աշխատողներին ու Ընկերության հետ համագործակցող գործընկերներին:

Հրապարակման ամսաթիվը 25.12.2024թ.

Tel: +374-60-500003, +374-285-33131
Email: info@zcmc.am

Հեղինակ և նախագծի ղեկավար՝
Արտյոմ Պետրոսյան

Հեղինակ՝
Արմեն Ստեփանյան